

ԿՈՍՏԱՆԴՅՈՒՊՈԼՍԻ ԱՆԿՄԱՆ
ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԺԵ. ԴԱՐԻ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Սուլթան Մեհմեդ Երկրորդը 1452ի աշնանը գրաւում է բիւզանդական կայսրերին պատկանող մի քանի քաղաք՝ լիովին շրջափակման մէջ գցելով Կոստանդնուպոլիսը։ Նա հաւաքում է բազմահազարանոց բանակ եւ 1453ի Մայիսի 29ին գրաւում քաղաքը։ Կոստանդնուպոլիսի անկումը ցնցում է քրիստոնեայ աշխարհը։

Ողբերգական այս իրադարձութեան ազգեցութեամբ հէնց նոյն՝ 1453ին, ծնւում են Աբրահամ Անկիւրացու՝ «Ողբ ի վերայ առուման կոստանդինուպոլսոյ» եւ Առաքել Բաղիչեցու՝ «Ողբ մայրաքաղաքին Ստամբուլու» չափածոյ ստեղծագործութիւնները՝ իբրև հինաւուրց քրիստոնեայ ժողովրդի, նաեւ հարազատ ազգի ճակատագրով մտահոգուած մտաւորականների հոգետրամադրութեան, ժամանակի ազգային գաղափարախօսութեան դրսեւորումներ։ Ցաւի ուժգնութիւնը նրանց ստիպում է «վա՛յ» եւ «եղո՛ւկ» կանչելու, ինչպէս գրում է Բաղիչեցին, կամ, ինչպէս Անկիւրացին է ձեւակերպում, «յոյժ ողբալով» գոչելու, կսկծալով հոգոց հանելու եւ արտասուելով հառաչելու։

Ողբագիրների խոռվացոյց վիճակը պայմանաւորուած էր մի շաբթ հանգամանքներով։

Տեղի ունեցածը քրիստոնէական համընդհանուր աղէտ էր, որովհետեւ հարուածը վերաբերում էր քրիստոնէական հզօր պետութեան, որի հետ յոյսեր էին կապում արեւելեան քրիստոնէութեան շրջագծում ժողովուող ժողովուրդները։ Իր սուգի պատճառները այսպէս է բացատրում Առաքել Բաղիչեցին։

Այսօր ի սուգ մտեալ ողբայ,
զի գերեցին ըգբեզ, Ստամպօ՛լ,

Քանզի մարմինն աստուածազարդ
ի լեզ պահեալ կայր, Ստամպօ՛լ: (17-18)¹

Առանձնակի սիրով ու հպարտութեան զգացումով են պարուրուած Անկիւրացու այն տողերը, որոնք յիշեցնում են ունկնդիրներին Կոստանդիանոս մեծ արքային եւ «ի Քրիստոս հաւատացեալ» Սեղբեստրոս պատին, հիւսում են հազարամեայ կեանք ունեցող քաղաքի հակիրճ, բայց պատկերաւոր պատմութիւնը՝ սկսած այստեղ Կոստանդիանոսի կողմից թագաւորական աթոռի հաստատմամբ, քաղաքին տրուած «նոր Հոռմ» անուամբ², ապա թագաւորների գահակալմամբ մինչեւ Յուստինիանոս թագաւորը: Վերջինս Անկիւրացու ժլատ բնորոշումների մէջ արժանանում է «յոյժ անուանի մեծ կայսր» բնորոշագրին, որովհետեւ աւելացրել է քաղաքի դիրքը՝ կառուցելով Սուլր Սոփիայի «մեծահոչչակ» տաճարը, «որ բարգմանի իմաստութիւն».

Յուստինիանոս թագաւորեալ,
Յոյժ անուանի մեծ կայսր եղեալ,
Լզրիրը քո նա յաւելեալ
Եւ զՍոփիայն բարձրացուցեալ: (305-308)³

Կոստանդնուպոլիսը, որ Անկիւրացու կողմից մեծարւում է իբրեւ «մեծ քաղաք», «մայր քաղաքաց», «թագաւորաց քաղաք», դառնում է հոգեւոր կենտրոն՝ իր «աստուածազարդ» եկեղեցիներով: Այստեղ են գումարւում եկեղեցական կարեւորագոյն ժողովները, այստեղ են մեկնում բազում հաւատացեալներ՝ իրենց հոգու խաղաղութիւնը վերագտնելու, սրբութիւններին ուխտ անելու եւ Քրիստոսի պատմուճանը տեսնելու, ինչպէս ինքը՝ Անկիւրացին:

- Մէջբերումները կատարում ենք Արշալոյս Ղազինեանի հրատարակութիւնից՝ տողերի համարակալումների նշումով: Տե՛ս Ա.Դ.Ա.ՔԵԼ, ԲԱ.Ղ.ԻՇԵՑՅԻ, XV դար, ՂԱ.ԶԻՒՆԵԱՆ, Ա., (Ուսումնասիրութիւն, բննական բնագրեր և ծանօթագրութիւններ), Երևան 1971, 222-237:
- Անկիւրացին հետեւում է միշնադարեան տարածուած աւանդութեանը, ըստ որի՝ քաղաքը նոր Հոռմ է անուանել Կոստանդիանոսը: Աղքիւրների մասին տե՛ս ԿՐԵՅՆԵՎՍԿԻЙ, И.И., *Повесть о Царграде*, "Ученые записки 2-го отделения Императорской академии наук", СПб. 1854, кн. 1, разд. III, с. 106.
- Մէջբերումները կատարում ենք Յ. Անասեանի հրատարակութիւնից՝ տողերի համարակալումների նշումով: Տե՛ս Ա.Ն.Ս.ՍԵԱՆ, Յ. Ա., Հայկական աղքիւրները Բիւզանդիայի անկման մասին, Երևան 1957, 29-54:

Երեք ամիս անդէն կացեալ
Եւ զսրբութիւնսն ուխտ արարեալ,
Հզպատմունանըն Քրիստոսի
Բազում անգամ աչօք տեսեալ: (385-388)

**Եւ կորստեան ցաւը, մարմնաւորուելով իբրեւ ճարտասա-
նական հարց, դիմուղղում է Կոստանդնուպոլսին.**

Կոստանդինուպոլիս գովեալ,
Թագաւորաց գահոյք կազմեալ,
Այժմ է՞ր եղեր դու աւերեալ,
Անօրինաց կոխան եղեալ: (285-288)

**Աստծու կողմից ընտրուած սրբերի քաղաք էր Բիւզանդիան
նաեւ Պոռ գիւղում ծնուած Ալաքել Բաղիշեցու համար: «Աստուա-
ծահրաշ», «աստուածափանչ» քաղաքը՝ քրիստոնեաների ուրախու-
թիւնն էր, աստուածութեան օթեւանը, սրբերի, երինային զօրքի
ու քահանաների ժողովարանը, ուր միայն օրհներգութիւնն էր
հնչում, եւ ծարաւածները գտնում էին կենաց աղբեւրը:**

**Աստուածաբան սուրբ հայրապետների օրհնած քաղաքը
դարձել էր Տիրող Աջով տնկած եղեմ՝ անմահութեան պտուղնե-
րով, մարդկանց մարմնական ու հոգեւոր ցաւերի դարման.**

Վիրաց բրժիշկ, Բիւզանդիա,
մեղաց քաւիչ, Բիւզանդիա,
Եւ ամենայն ցաւագարաց
առողջութիւն, Բիւզանդիա: (79-80)

**Բոլոր հաւատացեալները մեծ փափաքով ուխտադրութեան
էին գալիս Կ. Պոլիս, որովհետեւ այն էր «գանձանակ տեառն գան-
ձուց հոգեւորաց կարգեալ», եւ «մարգարիտ՝ տեառն քարոզ արքա-
յութեան երկրի», երկրորդ Երուսաղէմ էր, մեծահամբաւ քաղաք:**

**Երկու ողբագիրների համար էլ անսահման է ցաւն ու ան-
չափելի, որովհետեւ «սուրբ քաղաքը» պղծուել էր հեթանոսների
կողմից, զարձել ծաղրի առարկայ: «Այսօր եղեր ծաղր ամենայն
հեթանոսաց դու, Ստամպո՛լ» (51), - գրում է Բաղիշեցին, նոյնն է
ցաւով արձանագրում Անկիւրացին. «Նախատ դրացեաց զինակ ա-
րարեալ, շրակայիցըն ծաղր եղեալ» (319-320):**

**Անկիւրացին դառը կակիծով թղթին է յանձնում եկեղեցի-
ներում անօրէնների կատարած վայրագութիւնների եւ խաչի ա-
նարգման նկարագրութիւնը.**

Ըզգանկակնին վայր քափեցին,
Զժամահարնին կոտորեցին,
Զնըշան խաչին անհետ արին,
Ըզուրբ խորհուրդըն ցըրուեցին: (173-176)

Եթէ վերյիշենք Շնորհալու՝ Կոստանդնուպոլիսը բնութագորող տողերը, ապա ակնբախ կը դառնայ, որ որոշ արտայայտութիւններ ընդհանուր մտածողութեան արգասիք են.

Առ քեզ են բանք իմ փարկի,
ո՞վ դու քաղաք յոյժ պանձալի,
Զոր Կոստանդեայ թագաւորի
շինեալ ի սկիզբն Ասիայի:
Երկրորդ եղեալ Երուսաղէմ
եւ նոր Հռոմ զարմանալի,
Սիրեցելոյն աշակերտի⁴
արոռ գալով փոխադրելի:
Ժողովարան սուրբ Վկայից,
տուն եւ տեղի մաքրագունի,
Գահոյք հզօր մեծ արքայի,
յերկրի նման երկնաւորի⁵:

Սակայն Բաղդիշեցու քերթուածի հոգեբանական, զգացմունքային լիցքերը, որ ծնուռմ են քաղաքի նախկին փառքի եւ իր ժամանակի դառնագին վիճակի հակադրութեամբ, եւ Անկիւրացու սթափ դատողութիւնը՝ համակուած անմիջականութեամբ, երկու քերթուածն էլ դարձնում են խորապէս անձնական վերապրումների արտայայտութիւն, թէեւ ուսումնասիրողները դըրանք բարձր չեն գնահատել արուեստի տեսանկիւնից: Գրեթէ նոյն բառերով են բնորոշում Անկիւրացու Ողբը Եղիշէ Դուրեա-

4 Նկատի ունի Յովհաննես Աւետարանչին:

5 ՆերՍէՍ ՇնորհԱԼԻ, Ողբ Եղիշելոյ, ՄԿՐՁՉԵԱՆ, Մ., (Քննական բնագիր, բանասիրական դիտողութիւններ, ծանօթագրութիւններ), Երեւան 1973, 25: Ինչ վերաբերում է Կոստանդնուպոլիսը կրկին (Երկրորդ) Երուսաղէմ կամ նոր Հռոմ կոչելուն, Յ. Անասեանը յիշատակում է 965 քուականի մի յիշատակարան («Եթշատակարամ ձեռագրաց», Ա., 1951, 117-118), ուր Բիւզանդիոնի մասին գործածուած են «ի եշմարիտն Երուսաղէմ» եւ «Երկրորդումն անուանեալս Հռոմ եւ կոչեալս նոր Երուսաղէմ» արտայայտութիւնները: Տե՛ս ԱՆԱՍԵԱՆ, Յ., Հայկակամ աղրիւթերը, 62. աշխ., 78:

Ա. Եւ Հ. Գարեգին Զարբհանալեանը՝ «անարուեստ շարագրութեամբ քերթուած»⁶, «անարուեստ ոտանաւոր շարագրութիւն»⁷: Զարբհանալեանը Բաղիչեցու քերթուածը Անկիւրացու Ողբի համեմատ գեղարուեստական տեսակէտից աւելի արժէքաւոր է համարում. «Երիցագոյն է սա ժամանակական քննկիւրացին. բայց այս վերջնոյն գրուածքին մէջ համեմատարար աւելի կարգարանութիւն եւ ոճ կը նկատուի»⁸:

Հ. Հեւոնդ Ալիշանն առաջիններից մէկն է, որ ընդգծում է Անկիւրացու գրուածքի «տաք զգացումը» եւ նաեւ «մար ինչ պարագայք», այսինքն՝ դէպքերի մանրամասն նկարագրութիւնը հաշուի առնելով՝ նրան գնահատում իրեւե ԺԵ. գարի եթէ ոչ օրինաւոր պատմիչ, ապա գոնէ վիպասան»⁹:

Ա. Զոպաննեանը 1901ին հրատարակում է Բաղիչեցու Ողբը եւ արժեներում այն իր քաջ ու յամառ, սեւեռեալ գաղափարի եւ այն լցնող գեղեցիկ չնչի համար¹⁰:

Յ. Անասեանը Անկիւրացու եւ Բաղիչեցու Ողբերը գնահատում է իրեւե հայ ժողովրդի քաղաքական մտածողութեան արտայայտութիւններ, որոնք հնարաւորութիւն են տալիս պարզաբանելու թիւզանդիխայի անկման պատմութեան հետ առնչուող միշտարք հարցեր¹¹: Աշ. Ցովհաննիսեանը քննում է Ողբերը ազատագրական լեզենդի ազդեցութեան համապատկերում¹²:

«Պոլիսը եւ իր դերը» ուսումնասիրութեան մէջ Յ. Սիրունին Բաղիչեցու Ողբի հայքը տեսնում է ընթերցողի վրայ տըպաւորութիւն առաջացնող զգացմունքի եւ դրանից առկայծող յափշտակութեան մէջ. «Ան աղէտը կ'ողբայ մէկու մը նման, որ քիւզանդական մայրաբաղաքը նանցած է իր փառքի օրերուն, եւ որ երեսնին այդ մեծ ոստանին գովքը կը հիւսէ կարծես արցունքը աչքին, եւ եթէ իր այդ գովքին մէջ յափշտակութենէ տարուած քերթու-

6 ԴՈՒՐԵԱՆ, Ե. Վ., Պատմութիւն հայ մատենագրութեան, Կ. Պոլիս 1885, 76:

7 ԶԱՐՊՀԱՆԱԼԵԱՆ, Գ., Պատմութիւն հայերէն դպրութեանց, Բ. Նոր մատենագրութիւն, Վենետիկ 1878, 169:

8 Անդ, 170:

9 ԱԼԻՇԱՆ, Ղ. Վ., Հայապատում, Վենետիկ 1901, 319:

10 «Անակիտ», Փարփ 1901, 217:

11 ԱՆԱՍԵԱՆ, Յ., Հայկական աղքիւրմերը, Եշ. աշխ., 5-25, նոյն, Հայկական մատենագիտութիւն, Ե-ԺԸ դդ., Ա., Երևան 1959, 1106:

12 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Ա., Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք առաջին, Երևան 1957, 88-90:

նի մը մտքի բռիչքը կայ, կ'ընդնշմարուի նաեւ կսկիծը, որով համակուած է»¹³:

Համ Մ. Աբեղեանի՝ Բաղիշեցու «Բանաստեղծութիւնը, որքան իր գաղափարով կարեւոր եւ ուժեղ է, այնքան բռյլ է իր միակերպ ճեւով. բայց ժամանակակիցների համար անշուշտ արժեքաւոր, նրանց հարկաւոր է բռվանդակութիւնը, որ է կենդանի, յուսալից շնչով ու հաւատքով»¹⁴:

Հ. Կիւրեղ Քիպարեանը, ներկայացնելով Ողբի երեք մասերի բովանդակութիւնը, այն բնութագրում է որպէս հայրէնիքի սիրով բոլորուած սրտի սրտառուչ ողբ եւ լաւատես երգ¹⁵:

ինչպէս տեսնում ենք, աստիճանաբար ուսումնասիրողները վեր են հանել, մատնանշել այս մատենագիրների քերթուածքների բանաստեղծական արժէքն ու նշանակութիւնը: Վերջին ժամանակներում նրանց Ողբէրն առաւել համակողմանիօրէն գնահատել են Պ. Խաչատրեանը¹⁶ եւ Արշ. Ղագինեանը¹⁷:

Չոպանեանի¹⁸, Սիրունու տեսակէտներում¹⁹ արծարծւում է այն նկատառումը, որ չնայած Բիւզանդիայի կրօնական ոտնձը-գութիւններին, դարեր շարունակ հայ ժողովրդին դառնութիւններ բերելուն՝ հայերը անտարբեր չէին կոստանդնուպոլիսին վիճակուած աղէտի հանդէպ:

Աւելին, հաւատացեալ մարդու հոգեկան ներքին ալեկո-ծումների մէջ Անկիւրացին եւ Բաղիշեցին չեն մոռանում գո-վերգել կոստանդնուպոլիսը նաեւ իբրև քաղաքակրթութեան օր-րանի: Դա նկատում է Չոպանեանը: Նա գրում է. «Քերթուածին առաջին մասը մեզի կը յայտնէ այն հիացական պաշտամունքը զոր Հայերն ունեին, - հակառակ կրօնական եւ բաղաքական բռլոր գժուութիւններուն, - Վոսկիորի վրայ գահող եւ բրիստոնեայ բաղաքակրթու-թեան սիրտը ներկայացնող դիւրական ու մեծաշուր Քաղաքին համար, եւ որ մասնաւորապէս Հայոց՝ մտաւոր, հոգեկան, գեղարուես-տական գարգացման մեծ վառարանն էր»²⁰:

13 «Էջմիածին», 1963, ի (Գ), 15:

14 ԱԲԵՂԵԱՆ, Մ., Երկեր, Դ., Երեւան 1970, 443:

15 ՔԻՊԱՐԵԱՆ, Կ. Վ., Պատմութիւն հայ եից գրականութեան, Վեճեստիկ 1992, 571:

16 ԽԵԶԱՏՐԵԱՆ, Պ. Մ., Հայ միջնադարեան պատմական ողբեր, Երեւան 1969, 74-86:

17 ԱՄԱԾԵՑ, ԲԱՂԻՇԵՑԻ, Աշ. աշխ., 140-151:

18 «Անակիտ», Աշ. աշխ., 217:

19 Էջմիածին», ի (Գ), Աշ. աշխ., 14:

20 «Անակիտ», Աշ. աշխ., 217:

Իրապէս, Բաղիշեցին շարունակ գտնում է համեմատութիւնների նոր եզրեր՝ արտայայտելու ցաւին խառնուած իր հիշցմունքը «աննման», «վայելչագեղ», «ընտիր» քաղաքի համար.

**Փառք եւ ծովու եւ ցամաքի,
նաւահանգիստ քաղաք Ստամպօլ: (14)**

Նաեւ՝

**Երանութեանց էիր տեղի
եւ գովութեանց պատճառ, Ստամպօլ. (39)**

Կոստանդնուպոլիսի՝ մշակութային հզօր քաղաք լինելու մասին է ակնարկում Անկիւրացին եւս: Բռնագրաւուած գրքերի, պատկերազարդ, արծաթապատ աւետարանների քանակութիւնը ապչեցրել էր թուրքերին.

**Խիստ անհամար գրոնանք քերին,
Տաճկունք տեսեալ զարմանային: (213-214)**

Թուրքերի այդ զարմանքի մէջ առկայ է երկու բեւեռների հսկայական տարբերութիւնը:

Կոստանդնուպոլիսը չքեղ, ճոխ քաղաք էր, եւ ժամանակի ողբալի կացութիւնը ցաւ էր պատճառում բոլոր նրանց, ովքեր քաղաքը տեսել էին «ի բարութեան ժամն», ինչպէս Անկիւրացին:

Սիրունին, ակնարկելով թուրքերի կողմից մշակութային բարձր արժէքների բնաջնջումը, «Պոլիս եւ իր դերը» ուսումնասիրութեան մէջ գրում է. «Պատմութեան մէջ յանախաղէպ են ծայրայերութիւններ, որոնք գրգռուած են արշաւանքներու առթիւ, երբ մոլեգնած բանակ մը կը մտնէ նուանուած քաղաքէ մը ներս: Բայց ինչ որ պատահած է Բիւզանդիոնի երթեան մայրաքաղաքին մէջ այդ ահաւոր երեք օրերուն՝ աւելի զարհութելի կը դառնայ, որովհետեւ քաղաքին բնակչութեան հետ խեղդամահ կ'ըլլար ամրող քաղաքակրթիւն մը»²¹:

Քաղաքի, եկեղեցիների անսահման հարստութիւնն է ուրուագծւում Անկիւրացու Ողբի տողերում.

**Բազում ապրանք աւար հանին.
Արծաթ, ոսկի եւ մարգարտնին,
Ակունք ազմիւ եւ պատուական,**

²¹ «Էջմիածին», ի (Գ), նշ. աշխ., 13:

Զոր չէ տեսեալ ազգ հողածին:
 Զեկեղեցեաց ընտիր անօթք,
 Մարգարտաշար եւ մնծագին,
 Արծաթպատ աւետարանին
 Պատկերանկար վայելչագին: (201-2018)

**Անգամ՝ ինքը՝ ՄԵՀԱՄԵԴՆ է ընկրկում Ս. Սոֆիայի գեղեց-
 կութեան առջեւ:**

Բաղիշեցուն եւ Անկիւրացուն համակած տրամադրութիւն-
 ների ձեւաւորման վրայ, անտարակոյս, իրենց ագորեցութիւնն ու-
 նէին նաեւ դարերի խորքից եկող հայ-յունական առնչութիւննե-
 րը²²:

Հայերը Բիւզանդիայում գրաղեցրել են բարձր պաշտօններ,
 կայսրութեան վարած պատերազմներին մասնակցել են հայկական
 զօրագնդեր, երբեմն հայերին վստահել են արքունիքի պահպա-
 նութիւնը: Կոստանդնուպոլիսում դարեր շարունակ ապրել են հա-
 յեր, իսկ ժ. դարից սկսած՝ ձեւաւորուել է հայկական համայնք:

Կոստանդնուպոլիսում բազմաթիւ հայեր էին ապրում նաեւ
 թուրքերի կողմից քաղաքի գրաւման ժամանակ: Կոստանդնու-
 պոլիսի պատրիարքարանի (1454-1578) պատմութեանը նուիրուած
 Անանուն մի գործում պահպանուել է վկայութիւն այն մասին,
 որ ՄԵՀԱՄԵԴ Բ.ի կողմից քաղաքի գրաւման յաջորդ օրը գումա-
 րուել է մեծ ժողով, եւ Սուրբ Սոփիա տաճարի մօտ հաւաքուել
 են տարբեր ազգերի մարդիկ, այդ թւում՝ հայեր՝ լսելու սուլթա-
 նի վճիռը²³:

Պահպանուել են նաեւ վկայութիւններ այն մասին, որ հա-
 յերը մասնակցել են պատերազմական գործողութիւններին²⁴:

22 Հայ-բիւզանդական հազարամեայ յարաքրութիւնների սեղմ պատկերը տե՛ս ԲԱՐԹԻԿԵՍՆ, Հ. Մ., Հայ-բիւզանդական հետազոտութիւններ, Խո. Ա., Երևան 2002, V-XVI:

23 Հայ գաղթաշխարհի պատմութիւն, Խո. Բ., Երևան 2003, 12:

24 Պատերազմական գործողութիւններին ականատես նեստոր Խականդերի "Պовесть о Царграде" գործում նշվում է, որ բուրքերի յարակումից յետոյ՝ առաւօտեան, երբ քագաւորը իրամայել է հաւաքել զոհուածների դիերը, Երանց մէջ եղել են 1740 յոյներ եւ 700 ֆրանկներ ու հայեր (ա Փրացու և Արման 700): "Ученые записки 2-го отделения Императорской
 академии наук", кн. 1, разд. III, 111: ГРИГОРЬЯН, К.Н., Из истории русско-
 армянских культурных связей X-XVII веков, "Труды отдела древнерусской
 литературы", том IX, Л. 1953, 332-333.

Կատարուածը նաեւ ուղղակիօրէն էր առնչւում հայութեանը: Եւ, առհասարակ, ողբագիրները պատմական իրադարձութեան հենքի վրայ հիւսում էին համազգային ողբը եւ ազատագրութեան համազգային երազանքը:

Յօդս էր ցնդում հազարամեայ գոյութեան ընթացքում բազմից յարձակումների ենթարկուած, բայց հպարտօրէն բարգաւաճող Բիւզանդիայի անխորսակելիութեան գաղափարը, եւ դրա հետ պատրանք էին դառնում անօրէններից ազատուելու յոյսերը, վերանում քրիստոնեայ փոքր ազգերի՝ Կ. Պոլսին ապաւինելու երաշխիքները: Բիւզանդիան հայերի եւ, առհասարակ, Արեւելեան Եփրատի ու Անդրկովկասի քրիստոնեայ ժողովուրդների համար հզօր ուժ էր, որ կարող էր կասեցնել թուրքերի առջևադացումը, աջակցել քրիստոնեայ ազգերին:

Բիւզանդիայի յաղթական երթը, քրիստոնեայ ժողովուրդների համար ունեցած նշանակութիւնն է բանաձեւում Բաղիչեցին հետեւեալ տողերում.

Ի յամենայն լեզուէ գովեալ
անուն յաղբող, Բիւզանդիա.
Եւ ամենայն ազգ եւ ազինք
ֆեզ յիշէին, Բիւզանդիա: (63-64)

Արտայայտելով իրենց վշտակցութիւնը յոյներին՝ Անկիւրացին եւ Բաղիչեցին ի ցոյց էին դնում նաեւ հայ ժողովորդի՝ ազատագրական ողորումների ուղիներում ապրած յուսախաբութիւնն ու լաւատեսութիւնը:

Քաղաքի կործանման պատճառները հասկանալու վնասութեան մէջ Աբրահամ Անկիւրացին վեր է հանում մի շարք գործօններ: Քերթուածը բովանդակում է հաւաստի տեղեկութիւններ: Իբրեւ դէպքերի ժամանակակից՝ Անկիւրացին միտում ունի ներկայացնելու իրադարձութիւնների իրական պատկերը: Նա կատարուած դէպքերի համապատկերի վրայ է քննում իրողութիւնները եւ յստակ ներկայացնում իր դիրքորոշումը: Դառնագին կորստի գլխաւոր պատճառներից մէկը նա համարում է նախ քաղաքի բնակչութեան երկարաւակութիւնը, որի հետեւանքով զէնք է վերցնում քաղաքի ներսում գտնուողների չնշին մասը միայն: Անկիւրացին գրում է, որ չնայած թագաւորն ու զօրքը «Բազում ջանիւ ի մարտ մլոտին», չկարողացան յաղթել թշնամուն.

Քանզի յերկուս բաժանեցան,
Միաբանիլ ո՛չ կարացին: (93-94)

Յ. Անասեանն իր «Հայկական աղքիւրները Բիւզանդիայի անկման մասին» գրքի առաջաբանում՝ ներկայացնում է Կոստանդնուպոլիսի գրաւման նախօրեակին Բիւզանդիայում տիրող քաղաքական իրադրութիւնը, իրար հետ պայքարի մտած երեք քաղաքական հոսանքները՝ ազգային-ուղղափառական, արեւմտական-լատինամէտ եւ թուրքամէտ: Վերջինս թուով անհամեմատ քիչ էր:

Երկու հիմնական հոսանքների ձեւաւորումը վաղեմի պատմութիւն ունէր: Կոստանդնուպոլիսի բնակչութիւնը երկիրեղուել էր դեռ Ֆլորէնցիայի (1439) կնքած ժողովից (ունիայից) յետոյ, որ ենթադրում էր կաթոլիկ ուղղափառ եկեղեցիների միաւորում՝ Հռոմի պապի գերիշխանութեամբ:

Ցովհաննէս է. Պալէոլոգի քայլը Կոստանդնուպոլիսի բնակչութեան մեծ մասն ընդունում է դիմագրութեամբ: Իրավիճակն աւելի է վատթարանում, երբ Կոստանդին Դրագասն է դիմում նիկոլա Ե. պապին: Արդիւնքում Կոստանդնուպոլիսի է ժամանում Խսիդոր Ռուսը: Բնակչութեան ուղղափառ հաստածը նոյնիսկ դադարում է մտնել այն եկեղեցիները, որոնց հոգեւորականները լատինամէտ էին:

Լատինների հանդէպ ձեւաւորուած ատելութիւնը աւելի խորքային էր: Բիւզանդիայի պատմութիւնն ուսումնասիրողներն արձանագրել են, որ Կոստանդնուպոլիսին ամենամեծ հարուածը հասցըել էին խաչակիրները դեռ իրենց Դ. արշաւանքի ժամանակ՝ 1204ին՝ գրաւելով քաղաքը եւ այն ենթարկելով կոտորածի ու աւերումների: Թէպէտ 1261 թուականին այն հետ գրաւուեց, սակայն, ինչպէս գրում է Լ. Տէր-Պետրոսեանը, «հազարամեայ կայսրութիւնը գտար իր վախճանը, որովհետեւ դրանից 250 տարի առաջ խաչակրութիւնը ջարդել էր նրա ողնաշարը»²⁵:

Կոստանդնուպոլիսի անկման նախօրէին էլ վենետիկցիները, ջենովացիները մուտք էին գործել յունական հարուստ քաղաքները եւ տնօրինում էին առեւտրական գործերը:

Անկիւրացին յստակ պատկերացում է կազմել լատինների նկրտումների վերաբերեալ եւ իր համոզմունքն է փոխանցում ունկնդիրներին՝ ցոյց տալով, որ լատինները փորձում էին իրենց գործողութիւններով յետին պլան մղել Կոստանդնուպոլիսի դերը՝ իրեւ քրիստոնէական պատուարի: Խախտելով ողբի ժանրային առանձնայատկութիւնները՝ Անկիւրացին իր քերթուածն սկսում

25 Տէր-Պետրոսեան, Լ., Խաչակիրները եւ հայերը, հա. Ա., Երևան 2005, 137:

է անմիջապէս սուլթանի գործողութիւնների նկարագրութեամբ. յոյների հողի վրայ՝ Ղալաթիայից հինգ մղոն հեռու, կառուցում է Բողազ-քեսէն կոչուած բերդը: Այն ուազմավարական նշանակութիւն ունէր. փակում էր ճանապարհը, եւ նեղուցով անցնելու համար նաւերը պիտի վարձ վճարէին: Անկիւրացին ցաւով արձանագրում է.

Նախ փոքրագոյն բան խորհեցաւ,
Որ կատարումն էր ծանրագին: (9-10)

Զափազանցուած չէր տրուած գնահատականը. կայսրն ինքը, դժուակցելով սպառնացող վտանգը եւ աչքի առաջ ունենալով սուլթանի պատերազմական նախապատրաստութիւնները, դիմում է ֆրանկների օգնութեանը.

Զակն ի ֆըրանկ ազգըն ձգեաց
Թէ յօգնութիւն հասանէին: (35-36)

Անկիւրացին սուլթանի նպատակային գործողութիւններին, քրիստոնեայ քաղաքը նուաճելու սրբազն պարտքի գաղափարի շուրջ թուրքերի համախմբուելուն, թէկուզ եւ քաղաքում եղած հակայական հարստութեանը տիրելու հեռանկարով, հակադրում է «անգութ լատինական ազգի» վարած նենգ քաղաքականութիւնը.

Խսկ ազգի անգութ լատինական
Բանս անյարմար ի մէջ բերին՝
«Աւանդութեամբ ի մեզ դարձիր,
Զքաղաքի արա ի մեզ յանձին» (34-40)

Այսինքն՝ վոլխանակ միաբանուելու անհանգստացնող վտանգի դէմ, որ, ի վերջոյ, սպառնում էր ողջ քրիստոնէական աշխարհին, առաջազլուում էր հոռմէական եկեղեցու հետ յունական եկեղեցու միութեան հարցը: Այլ ելք չունենալով՝ կայսրն ընդունում է լատինների պահանջները: Դրա հետեւանքով՝

Քաղաքն յերկուս բաժանեցաւ,
Կէսքն՝ ի Հռոմ, կէսքն՝ ի լատին: (43-44)

Անկիւրացու Ռդբում առկայ է ֆրանկների տուած խոստումների եւ գործողութիւնների հեգնական արձագանքը. նաւերը տեղ չեն հասնում, որովհետեւ հիւսիսային հողմի պատճառով անյաջողակ երերում էին. «Ուր որ կային՝ անդ մընային» (52):

Քաղաքի գրութիւնն աւելի էր վատթարանում նրանով, որ բնակչութեան հարուստ խաւի մի մասն էլ պատրաստ էր համա-

գործակցելու թուրքերի հետ։ Արեւմտեան թեւին յարող պատմագիր Միքայէլ Դուկասը, հեգնանքով խօսելով մարդկանց բազմութեան մասին, ովքեր դեռ երէկ ոտք չէին դնում Մեծ եկեղեցին՝ լատինասէրների պատճառով համարելով այն հերետիկոսների տաճար, իսկ ահեղ վտանգի պահին ապաստարան էին փընտում այնտեղ, գրում է, որ անգամ այդ պահին, եթէ հրեշտակն իջնէր երկնքից եւ ասէր, որ եկեղեցիների միութիւնն ընդունելու դէպքում կը վոնդի թշնամիներին քաղաքից, նրանք չէին համաձայնի, իսկ եթէ համաձայնէին էլ, կեղծ կը լինէր այն։ Իբրեւ իր ասածի ապացոյց՝ նա բերում է նրանցից մէկի խօսքերը. «Լաւ է ընկնել բուրքերի ձեռքը, քան ֆրանկների»²⁶։ Դրանք բիւզանդական նաւատարումի հրամանատար Լուկա Նոտարասի խօսքերն էին, որոնց արձագանքը կայ նաեւ Անկիւրացու Ողբում.

Ումանք էին հետ թագաւորին,
Կէսին ասէին՝ կուտամք բուրքին։ (95-96)

Բիւզանդագիտութեան մէջ գոյութիւն ունի տեսակէտ, ըստ որի՝ կայսրութեան կործանման գործում վճռորոշ նշանակութիւն է ունեցել «նրա հակառակորդների հասարակական զարգացման տիպերի տարրերութիւնը, այսինքն՝ առանձին վերցրած լատինների եւ օսմանների դէմ Բիւզանդիան, հաւանարար, կարող էր կանգուն մնալ, սակայն միանգամից երկու տարրեր հասարակական ուժերին ընդդիմանալ չկարողացաւ»²⁷.

Այսպէս, դէպքերի անմիջական ազդեցութեամբ Անկիւրացին քննում է ժամանակաշրջանի իրողութիւնները եւ ֆրանկների անհեռատես, շահադիտական քաղաքականութեան հետեւանքները։ Թէեւ նա ընդհանրացումներ չի կատարում, եւ ուղղակիորէն յիշատակում չկայ հայ-յունական, հայ-հռոմէական եկեղեցիների յարաբերութիւնների մասին, բայց քննադատութիւնը գուգահեռ է արթնացնում Շնորհալու ժամանակաշրջանի հետ, երբ մեծ մտածողը, քաջ պատկերացնելով հօգոր պետութիւնների քաղաքական նկատմանները, առաջադրում էր քրիստոնեայ բոլոր ազգերի միջեւ իսկական խաղաղութիւն կնքելու հարցը՝ փոխըմբռնման, դաւանաբանական մանր խնդիրներից վեր բարձրանալու, քրիւ-

26 Публикации источников, Византийские историки Дука и Франодзи о падении Константинополя, СТЕПАНОВА, А.С., (Перевод и предисловие), "Византийский временник", том VII, М., 1953, с. 402:

27 ԶԱՂԱՅՊԱՆԵԱՆ, Ե.Դ., Բիւզանդիան կործանման նախօրէին, ի Պատմաբանական հանդէս, 1988, թիւ 2, 66-67:

տոնէական միասնական ճակատ ստեղծելու եւ վրէժխնդրութիւնն իրականացնելու գաղափարը։ Ողբակցութեան կանչելով քրիստոնէական քաղաքներին՝ Շնորհալին եղեսիայի միջոցով ուղղակիօրէն հնչեցնում էր հարց-մեղադրանքը։

Ընդէ՞ր չհասեր վաղվաղակի
ինձ ի թիկունս օգնականի,
Այլ քոյլ եսուր վասն խեթի
մատնիլ ի ձեռս անօրինի²⁸:

Անտարբերութեան համար համարձակ ու բացայայտ քրիստոնէայ երկրներին էր մեղադրում նաեւ Գրիգոր Տղան. «Եւ ոք չհասաւ ինձ ի թիկին»²⁹:

Իբրև քաղաքական ծրագիր՝ նա առաջադրում էր հակառակորդի դէմ միասնական ճակատ ստեղծելու խնդիրը, քանի որ արեան ծարաւի կատաղի գայլերը, որ վաղուց էին դարան մտել, սպասում էին հնոց այն չար ժամին, երբ երուսաղէմը մենակ կը մնար: Թշնամին յարձակւում է, որովհետեւ՝

Առ հաւասար բարձի քողին
Զիս միայնակ ըստ կաֆաւին³⁰:

Իր ժողովրդին հասած դառնագոյն վիճակի պատճառը քրիստոնէութեան անմիաբանութիւնն էր համարում նաեւ Ֆրիկը.

Ամէնքն ատողք են միմեանց,
Վասն այն օտարք զգմնող կոխնեն³¹:

Այլ խնդիր է, որ միջնադարեան հեղինակները մշտապէս բախուել են յուսախարութեանը, ինչպէս, օրինակ, Շնորհալին: Եթէ իր «Վիպասանութիւն» քերթուածում Շնորհալին վերյիշում է երկու թագաւորների միջեւ կնքուած դաշինքի մասին զրոյցը՝ «Ի յուխտ դաշանց միաբանեալ, // Թագաւորացն երկուց եղեալ», «Ողբ եղեսիոյ»ն գրելիս յուսափառուում Խաչակրաց երկրորդ արշաւանքի (1147-1149) մօտալուտ մեկնարկի մտքից՝ «Նարծէ կըր-

28 ՆերՍէՍ ՇնՈՐՀԱԼԻ, Ողբ Եղեսիոյ, Աշ. աշխ., 29:

29 ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ, Բանաստեղծութիւններ եւ պոէմներ, ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Ա. Շ., (աշխա.), Երևան 1972, 268:

30 Սնդ, 269:

31 ՖՐԻԿ, Դիւան, ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ, (ուսումն.), Կիւ Ենրք 1952, 275:

32 ՆերՍէՍ ՇնՈՐՀԱԼԻ, Վիպասանութիւն, ՄԿՐՏՉԵԱՆԻ, Մ., (աշխա.), Երևան 1981, Էջ 80:

կին զազգն Փռանկ, անհուն հեծեալ եւ հետեւակ»³³, ապա արդէն «Բան հաւատոյ» (1151) քերթուածի յիշատակարանում խոստովանում է ցաւալի ու անհերքելի ճշմարտութիւնը.

Ի բարկութեան ժամանակի,
Յորում նեղիմք յանօրինաց,
Եւ ոչ նուազ ի դրժանաց
Ի սուտանուն քրիստոնեաց³⁴:

Եւ չնայած այս դասերին՝ հայ ժողովուրդը շարունակում էր փայփայել անօրէնների դէմ սրբազն պատերազմում քրիստոնեայ հզօր դաշնակից ունենալու երազանքը, եւ Առաքել Բաղիշեցու Ողբը համակլում է լուսաւոր, պայծառ լաւատեսութեամբ՝ լցուած Փրանկների գալստեան սպասումով։ Վերջիններիս ձեռքով ապատագրուելու յոյսը Բաղիշեցու մօտ դառնում է վստահ համոզմունք, որ թոյլ է տալիս նրան նոյնիսկ ներկայացնելու այն երթուղին, որով անցնելու են Փրանկները։ Նրանք նախ ազատագրելու են երբեմնի Կոստանդնուպոլիսը, ապա՝ Երուսաղէմը, համենելու են Պարսկաստան, գրաւելու են Թալրիզն ու մտնելու են Խորասան։ Իր վստահութիւնը Բաղիշեցին խարսխում է աստուածային սուրբ հայրապետների մարգարէութիւնների, Ազաթոնի գուշակութիւնների, «Դաշանց թղթի» վրայ եւ վերջիշելով Տրդատի ու Կոստանդիանոսի միջեւ կնքուած դաշնադրութիւնը՝ մեծ ոգեւորութեամբ կանխատեսում է Փրանկների յաղթական երթը՝ հիւսելով պատկերաւոր դրուագներ։ Ինչպէս նկատում է գրականագէտ Պ. Խաչատրեանը, «Երրորդ հատուածում հեղինակն ըստ Ագարոնի «գուշակութեան» և «Դաշանց թղթի» շարադրելով հայ ազատագրական լեգենդը՝ իւրացըել է նաև այդ անվաւեր երկերի որոշ պատկերաւոր համեմատութիւններ»³⁵։

Բաղիշեցին փայփայում է մի երազանք, որն անչափ կարեւոր էր անվերջ ասպատակութիւնների, կողոպուտների ու աւերի ենթարկուած Հայաստանի համար։ Վաղարշապատում վերականգնուելու է Արշակունիների գահը եւ Լուսաւորչի տան ժառանգները շարունակելու են իրենց աստուածանուէր գործունէութիւնը՝ ուրախութիւն եւ ցնծութիւն բերելով Հայոց աշխարհին։

33 ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Ողր Եղեսիոյ, Աշ. աշխ., 128:

34 ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Բամբ չափաւ, Վեմետիկ 1830, 242:

35 ԽԱ.ԶԱ.ՏՐԵԱՆ, Պ., Հայ միջնադարեան պատմական ողբեր, Աշ. աշխ., 85:

Ազգս Հայոց պայծառանայ,
զի յայլազգեացն ազատեսցին,
Բերկրեալ ցնծան ամենեթեան՝
որպէս յաւուրս Լուսաւորչին: (117-118)

Բաղիշեցին չի կորցնում այն հաւատը, որ արդար, «աստուածառաք» պատերազմում Փրկչի ամենազօր կամքը ցնծութիւն կը բերի քրիստոնեաներին:

Զոպանեանի ձեւակերպմամբ՝ «Բաղիշեցու այդ յոյսին, այդ հաւատքին, այդ երազին մէջ ամբողջ հայ ցեղին հոգերանութիւնն ու նակատագիրն ի յայտ կու գան»³⁶: Իրապէս, դեռ Սահակ Պարթեւի տեսիլքում էր կանխատեսում Արշակունիների թագաւորութեան եւ Լուսաւորչի տոհմի կաթողիկոսութեան վերականգնման մտայնութիւնը: Աշ. Յովհաննիսեանը գրում է, որ այդ գաղափարն առկայ էր արդէն Հ. դարում³⁷: Քաղաքական վայրիվերումների հետ շրջանառութեան մէջ էին մտնում Ներսէս Պարթեւի, Ագաթոնի, Կողեւոնի գուշակութիւնները, Կոստանդիանոս Կայսրի ու Տրդատի միջեւ կնքուած սիրոյ եւ միաբանութեան դաշինքի պատմութիւնը, եւ դարեր շարունակ ապաւինած ազատագրական այդ զրոյցներին՝ հայ ժողովուրդը հաւատում էր իր ապագային: Բաղիշեցին էլ ոգեւորուած Նիկողայոս Ե. պապի կողմից նոր խաչակրաց արշաւանք կազմակերպելու խոստումներով, ազատագրական լեգենդի մէջ ծուարած սպասումները կատարուած իրողութիւն էր տեսնում գծելով Փրանկների մուտքը Վաղարշապատ հայ այն առաջնորդների գլխաւորութեամբ, որոնք ժառանգներն էին սիրոյ դաշինքի հաստատման ժամանակ Կոստանդիանոսի մօտ մնացած 200 զինուորների³⁸:

Իր ուսումնասիրութեան մէջ Արշ. Ղազինեանը նշում է, որ «Բանաստեղծի յայսը յոյս է տալիս լքուածներին, խոհը՝ խմաստ նըրանց ճգտումներին, հաւատը պայցքարի ողի ներշնչում մարդկանց, երազանքը դարձնում ընդապի նպատակ»³⁹:

Կոստանդնուպոլսի անկումից դարեր անց էլ, ապաւինած մարդարէութիւններին, հայ ժողովուրդը դեռ ակնկալում էր, որ

36 «Անահիտ», 1901, 217:

37 ՅՈՎՀԱՆՆԻՍԻՍԵԱՆ, Ա., Դրուագմեր, Աշ. աշխ., 36:

38 Բազմավիզ, 1913, 396: Ըստ Բաղիշեցու՝ չորս հարիւր զինուորներ (տող՝ 125):

39 ԱՌԱ.ԲԵԼ, ԲԱՂԻՇԵՑԻ, XV դար, Աշխ., 148:

իր փրկութիւնը պիտի գայ քրիստոնեայ թագաւորի ձեռքով։ Մինչդեռ ծայրաստիճան անվստահութիւնը ֆրանկների հանդէպ թոյլ չի տալիս Բաղիշեցու ժամանակակից Անկիւրացուն անդամ կոստանդին Դրագասի փախուստի վարկածի դէպքում⁴⁰ քաջալեցուել նրանց ենթագրեալ աշակցութեամբ։

Հստ Անկիւրացու՝ քաղաքն արդէն դատապարտուած էր կործանման.

Զի սուրբք եղեն յոյժ նըւագեալ
Ճշմարտութիւնքըն նըւաղեալ։
Եւ առաջնորդք նոցա մոլեալ,
ի սըրբութեանցըն հեռացեալ,
ժամ եւ աղօրք զոր արարեալ
Զայն մաքրութեամբ ոչ կատարեալ։
Խշխանք նոցա ուղիղ չդատեալ,
Զորբն եւ զայրին վըշուացուցեալ,
Եւ ժողովուրդն առհասարակ
Խիստ անառակ գործ ըստացեալ։
Վասն այն Աստուած յոյժ բարկացեալ
Եւ ցաւագին պատուհասեալ,
Սաստիկ գանիւ զնոսա հարեալ,
Իբր ըգփոշի զնոսա ցըրւեալ։ (339-352)

Անկիւրացին մէկ առ մէկ քննադատում է կ. Պոլսի բնակչութեան տարբեր խաւերին, ուրուագծում նրանց բարոյական նկարագիրը։ Իր վկայութեամբ՝ նա երեք ամիս ապրել է քաղաքում, ուխտադրութեան եկել, եւ դա հնարաւորութիւնն է տուել նրան ուսումնասիրելու հասարակութեան բարքերը, տեսնելու քաղաքում տիրող անիրաւութիւնը, անարդարութիւնն ու չարիքները։ Պակասում է ճշմարիտ հաւատը հոգեւորականների մէջ՝ մոլորուել են հոգեւոր առաջնորդներն անդամ, հեռացել են անվիճելի ճշմարտութիւններից, ժամ ու աղօթք են անում ապականուած հոգիններով։ Խշաններն արդար չեն դատում եւ վշտացնում են որբին ու այրուն։ Ողջ ժողովուրդն է զբաղուած անառակ գործերով։

40 Յայտնի է, որ փախչողը եղել է կարդինալ Խսիդոր Ռուսը։ Նա սկզբում գերի է ընկեւ՝ թաքցնելով ինքնութիւնը, վաճառուել է, տարուել Ղալքիա, ապա կարողացել է նաևով փախչել։ *Византийский временник*, т. VII, 442. Անկիւրացին քերում է տարածուած զրյցներից լած վարկածը։

Հասարակութեան տարբեր խաւերի՝ քրիստոնէական բարոյական պատուիրաններից հեռանալու այս նկարագրութիւնը յիշեցնում է Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»⁴¹:

Գրեթէ բոլոր մատենագիրները ազգի դժբախտութիւնների պատճառը բացատրում էին գործած մեղքերով, բարոյականութեան ու հաւատի պակասով: Նոյնը տեսնում ենք Բաղիչեցու մօտ. «Այսօր դարձար դիւաց տեղի վասն մեղաց, Բիւզանդիա» (76): Անկիւրացին էլ քրիստոնէական աշխարհայեցութեամբ մեկնաբանում, բացատրում է, որ բնակչութեան յուրի բարքերն են շարժել Աստծու զայրոյթը քաղաքի վրայ, քանից կրկնելով այդ միտքը:

Անկիւրացին դնում է հասարակութեան բարոյական մաքրագործման խնդիրը՝ իրեն ազգի գոյատեւման երաշխիք: Նա պատերազմական գործողութիւնների դրուագները ներկայացնում է ընդհանուր գծերով, առանց խորանալու մանրամասների մէջ, մինչդեռ հանգամանօրէն կանգ է առնում քաղաքը գրաւելուց յետոյ թուրքերի կատարած արիւնահեղութեան, քաղաքի ծանր վիճակի վրայ: Անկիւրացին նկարագրում է սահմուկեցուցիչ տեսարանները: Արեան ծարաւի զօրքը կոտորում է բոլոր նրանց, ովքեր ընդունակ էին զէնք բռնելու, միւսներին գերեզմարում են վաճառելու համար: Նորածիններին մայրերի գրկից խլում են եւ բարերին զարկում, ծերերին սրերով խողովում են: Մարդկանց մորթում են սպանդանոց տարած ոչխարների պէս, եւ լացն ու կականը, ողբն ու աղաղակը անհնար է դառնում մարդկային լեզուով պատմել: Շատերն իրենք են իրենց ինքնակամ մահուան տալիս: Թուրքերը սրբապղծում են եկեղեցիները, քանդում ու ջարդում խաչերն ու զանգակները, թալանում արծաթեայ եւ ոսկեայ ընտիր անօթները: Սուրբ Սոփիայում լրում են պատարագները:

Արիւնահեղ տեսարանների պատկերումը նպատակ է հետապնդում իր ժողովրդի յիշողութեան մէջ վառ պահելու կոստանդնուպոլիսի ճակատագիրը, որպէսզի մեղքերից, չարից հեռու մնալով, ճշմարիտ ուղիով քայլելով, բարոյապէս մաքրագործուելով, խոստովանելով ու ապաշխարելով ազգը արժանանայ Տիրով ողորմութեանը.

**Զնոսա տեսեալ մեզ ողորմեալ,
Որ չըլիմիմ նոցա նմանեալ:**

41 ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Թուղթ ընդհանրական, ԲՍՂԴԱՍՍՐԵԱՆ, Է. Մ., (աշխ.), Երևան 1995:

Միքէ լինի Տերն ողորմեալ,
Եւ ի չարեաց ըզմեզ պահեալ,
Ի մեզ խնայեալ եւ գըթացեալ:
Ըզատուհասն յետ դարձուցեալ: (363-368)

Հասարակական, քաղաքական իրադարձութիւնների վերլուծութիւնը կատարելիս Անկիւրացին հետեւում է Շնորհալու աշխարհայեցութեանը թէ՛ քաղաքի՝ մեղքի ախտում թաղուած լինելու պատճառով պատժուելու⁴², թէ՛ ունկնդիրների վրայ ազդեցու նպատակով Եղեսիային խելացնորութեան հասցրած ահազարհուր պատկերների նկարագրութեամբ⁴³, թէ՛ այս կեանքում խաղաղ ու անփորձանք ասլրելու երազանքով:

Շնորհալին գրում է.

Շինի աշխարհ քրիստոնէից,
յանչափ յանբաւ բարեաց լցած,
Լինի առաստ պատուղ բազմաց
սերմանց՝ ամէն պտղաբերաց:
Մարդիկ ցնծան զուարնացած,
յուտել, յըմպելն պարարած...⁴⁴

Անկիւրացին՝

Աստէն անփորձ ըզմեզ պահեալ,
Չար բանսարկուէն զմեզ ազատեալ,
Յանօրինաց չարեաց փըրկեալ
Եւ ի նեղաց զմեզ զերծուցեալ: (369-372)

Այսպէս, Անկիւրացին, չնայած Ողբը գրում էր Կոստանդնուպոլսի անկումից ամիսներ անց, երբ սուլթանը շարունակում էր իր դիրքերն ամրապնդել բռնագաղթեցումներով ու նոր տարածքներ գրաւելով, չի կորցնում լաւատեսութիւնը: Նա ապաւինում է Տիրոջը, ապաւինում է իր ազգի՝ Աստծու զայրոյթը չըշարժելու համար խոտոր ճանապարհից հեռու մնալու խելամտութեանը, հաւատում, որ քրիստոնեաները կ'ազատուեն անօրէնների լծից:

Անկիւրացու եւ Բաղիշեցու Ողբերը բազմաթիւ ընդօրինակութիւններ են ունեցել, թարգմանուել տարբեր լեզուներով, ուրովհետեւ համաշխարհային պատմութեան մէջ բեկումնային ի-

42 ՆԵՐՍԵԿ ՇԽՈՐՃԱԼԻ, Ողբ Եղեսիոյ, 62. աշխ., 53:

43 Անդ, 72:

44 Անդ, 131:

բաղարձութեան արձագանքն էին, քրիստոնեայ աշխարհի ու նրա մի մասը կազմող ժողովրդի ցաւի ու մորմոքի արտայայտութիւնը, նաեւ ապագայի հանդէպ ունեցած յոյսի, ազատասիրական երազանքների արծարծումը:

Թէ՛ Անկիւրացին, թէ՛ Բաղիշեցին ազատասիրական ձըդտումների գաղափարաբանութեամբ եւ հայեցակչում են մօտենում նոյն իրադարձութեանը, սակայն քաղաքական տարբեր մըտածողութեան արդինքում երեւոյթը ենթարկւում է գեղագիտական տարբեր ընկալումների:

Անկիւրացին պարզ անկեղծութեամբ, առանց հոգեկան զեղումների, պարզապէս ուղղագիծ շարագրանքով իրողութիւնների, արտաքին քաղաքական, հասարակական տեղաշարժերի, բարքերի պատկերն է վեր հանում՝ իր ժողովրդին դէպի մեղքը տանող ճանապարհից հետ պահելու մտահոգութեամբ, ապագայի չմարող յոյսով, Բաղիշեցին հիացական զմայլանքով ու ցաւագին աւաղներով քրիստոնեայ աշխարհի եւ հայ ժողովրդի ազատագրական տեսիլի պատրանքն է հիւսում՝ իբրեւ շուտով կայանալիք վստահ իրողութիւն:

Միջնադարեան քրիստոնէական աշխարհը ցնցած աղէտաւոր իրադարձութեանն են անդրագառնում նաեւ ԺԵ. դարի յիշատակագիրները, որոնք հայ ժողովրդի կեանքին վերաբերող զանազան տեղեկութիւնների կողքին արձանագրում են կոստանդնուպոլիսի գրաւման փաստը՝ իբրեւ կատարուած դառը իրողութիւն:

Սաստիկ նեղութեան եւ անբարի ժամանակը իր կնիքն է թողել նրանց գրչի վրայ, որ երբեմն յատկանշում է հոգեխոռով, սրտաշարժ արտայայտութիւններով, երբեմն դառնում է չոր ու ցամաք համառօտակի տեղեկագրութիւն:

Այլազգիների՝ Հայաստանին հասցրած վիշտն ու նեղութիւնը, սովը, գերութիւնն ու հարկապահանջութիւնն այն աստիճան ցաւ ու տրտմութիւն էին բերել երկրին, որ գրիչ Կարապետի բառերով՝ «Էկ քնար կարողութիւն պատմել կամ ընդ գրով արկանել»⁴⁵. Նրա յիշատակարանում (1461) արտացոլում են ողջ միջնադարում իշխող տրամադրութիւններն ու մտայնութիւնը՝ ազգի եւ, առհասարակ, քրիստոնեաների հետ կատարուածը դիտել իբրեւ վաղեմի մարգարէութեան իրականացում։ Նա գրում է. «Վա՞յ մեզ եւ դարձեալ վա՞յ.

⁴⁵ ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԽՍ.ԶԻԿԵԱՆ, Լ. Ա., (կազմեց) մասն երկրորդ (1451-1480), Երեւան 1958, 166:

զի կատարեցաւ մարգարելութիւն հոգելից առն Աստուծոյ սրբոյն ներսէսի, որ վասն քրիստոնելից, թէ յամենայն կողմանց նեղին եւ փոփոխին տեղուցէ ի տեղիս, եւ հանգիստ ոչ գտանեն, եւ վասն մարդադէմ եւ չարագոյն գազանացն ազգին նետողաց»⁴⁶:

Այսպէս, Կոստանդնուպոլիսի անկմանը անդրադարձած գրեթէ բոլոր յիշատակագիրները առաջ են քաշում երկնաւաք դատաստանի, քրիստոնէական մեղքի եւ նրան յաջորդած պատժի գաղափարը: 1457ին Ցոհաննէսը գրում է. «Եւ դարձեալ, ի մեր մեղացն, Մուրատ թէկ անաւրին էատ զըստընբաւլ զկոնստանդնուպալիս, եւ Խ. (40) թեռն խաչ եւ աւետարան, նշանարք եւ պատկեր հայրապետաց առին»⁴⁷:

Յիշատակարանների սեղմ տողերում ստուերագծւում են սուլթանի հրամաններից բխած պատուհանները, ինչպէս, օրինակ, քրիստոնեայ մանուկներ հաւաքելը (մանկաժողովները) եւ Ստամբուլ բերելը⁴⁸: Նոյնքան ցաւ է նրանց պատճառում տքնութեամբ ստեղծուած ձեռագրերի, աւետարանների գերեվարումը⁴⁹:

«Վասն մեղաց» է բացատրում պատմական իրադարձութեան նման ելքը գրիչ Ստեփանոսը՝ ողբերգական անցքերի նկարագրութեան մէջ արտացոլելով նաեւ իր Հոգեվիճակը. «...ի սուր սուսերի մաշեցան բնակիչքն նորա (իմա՝ Կոստանդնուպոլիսի), եւ գերի վարեցաւ անթիւ, եւ անհամար նշխար սրբոյն առ ոսս անաւրինաց կոխան եղեւ, եւ եկեղեցին՝ անաւրինաց եղեն բնակութիւն, եւ այլ բազում արհաւիրք եղեն, որ ո՞վ կարէ ընդ գրով արկանել» (1464):⁵⁰

Ոչ միայն Կոստանդնուպոլիսի, այլև Տրապիզոնի գրաւման եւ յետագայ աղէտների պատճառը նա նոյն կերպ է բացատրում՝ «վասն մեղաց եղեն այս ամենայն»:

Յիշատակագիրն ունի յստակ նպատակագրում. «Այլ այս գրեցաւ ձեզ ի խրատ եւ ի յաւգուտ, զի վասն մեղաց եղեն այս ամենայն, զոր տէր Աստուած փրկեսցէ զձեզ ի յամենայն փորձութեանց, ամէն»⁵¹:

Կոստանդնուպոլիսի անկումից գրեթէ քսան տարի անց՝ 1480ին, գրիչ Ներսէսը, որին բռնութեամբ Ամասիայից բերել էին Կոստանդնուպոլիս, բազում հառաջանքով եւ լալով գրում է սուլ-

46 Անդ:

47 Անդ, 81:

48 Անդ, 216:

49 Անդ, 389, 441:

50 Անդ, 211:

51 Անդ:

Թան Մեհմեդի թագաւորութեան «ի Յեղ եւ ի նուրբ» ժամանակների մասին, «զոր քազում մըրիկ յարուցաներ ի վերայ քրիստոնէից եւ իւր ազգին, ի տեղէ ի տեղ փոխելով եւ հարկապահանջուրեամբ եւ այլ շշտաւք»⁵²:

Պատմաճանաչողական արժէք ունեցող այս յիշատակարանները ի ցոյց են դնում պատմական իրողութիւնները, տալիս են ժամանակաշրջանի, սուլթան Մեհմեդի տիրապետութեան ընդհանուր բնութագիրն ու գնահատականը:

Նրանց մէջ առանձնանում է Դաւիթ Եպիսկոպոսի՝ 1453ին գրած յիշատակարանը⁵³, ուր առաւել հանգամանօրէն շարադըրում է Կոստանդնուպոլիսի անկման պատմութիւնը: Ընթերցողը իրազեկ է դառնում քաղաքի գրաւմանը նախորդած դէպքերին, քաղաքի պաշարմանը, քաղաքում տիրող հասարակական տրամադրութիւններին եւ քաղաքի անկման պատճառներին: Զնայած նրան, որ գրիչը բերում է յատակ տուեալներ թուրքերի զօրքի, կոստանդնուպոլիսի համար երեք տարի պատերազմելու, երկու կողմերի զոհերի թուրի, նաեւ նաւով փախածների մասին, ակներեւ է, որ Դաւիթ Խարբերդցու շարադրանքը հիմնուած է ժամանակակիցների վկայութիւնների ու տարածուած զորյցների վրայ: Պատմական անճշտութիւններն ի յայտ են գալիս մասնաւրապէս երկու կէտում.

1. **Ստամբուլի պատրիարքը եւ թագաւորը Հռոմ են գնում «վասն հաւատոյ հաստատութեան» եւ մնում են այնտեղ մէկ տարի:**

2. **Թագաւորը եւ պատրիարքը թուրքերի՝ քաղաք մտնելուց յետոյ նաւով փախչում են Հռոմ՝ իրենց հետ տանելով «զամնեայն սրբութիւնս»:**

Ցայտնի է, որ Ֆլորենցիայի (1438-1439) ժողովին մասնակցել են Կոստանդինի նախորդ Յովհաննէս Հ. կայսրը եւ Յովսէփ Բ. պատրիարքը⁵⁴, որ մահացել է այնտեղ: Ինչ վերաբերում է Կոստանդինին, ապա նա հերոսաբար կոռուել եւ զոհուել է մարտում: Այդ են վկայում յունական աղքահրմերը՝ Միքայէլ Դուկասը⁵⁵, դէռդիսու Սֆրանձին⁵⁶, Լաոնիկ Խալկոնդիլը⁵⁷:

52 Անդ, 443:

53 Անդ, 30-31:

54 Այս շփորութեանը անդրադարձել է նաև Յ. Անասեանը. տե՛ս Հայկական աղքահրմերը Բիզանտիայի ամկմամ մասիմ, 62. աշխ., 18:

55 Վիզանտիйский временик, том VII, 401:

56 Անդ, 429:

Թան Մեհմեդի թագաւորութեան «ի Յեղ եւ ի նուրբ» ժամանակների մասին, «զոր քազում մըրիկ յարուցաներ ի վերայ քրիստոնէից եւ իւր ազգին, ի տեղէ ի տեղ փոխելով եւ հարկապահանջութեամբ եւ այլ շշտաւք»⁵²:

Պատմաճանաչողական արժէք ունեցող այս յիշատակարանները ի ցոյց են դնում պատմական իրողութիւնները, տալիս են ժամանակաշրջանի, սուլթան Մեհմեդի տիրապետութեան ընդհանուր բնութագիրն ու գնահատականը:

Նրանց մէջ առանձնանում է Դաւիթ Եպիսկոպոսի՝ 1453ին գրած յիշատակարանը⁵³, ուր առաւել հանգամանօրէն շարադըրում է Կոստանդնուպոլիսի անկման պատմութիւնը: Ընթերցողը իրազեկ է դառնում քաղաքի գրաւմանը նախորդած դէպքերին, քաղաքի պաշարմանը, քաղաքում տիրող հասարակական տրամադրութիւններին եւ քաղաքի անկման պատճառներին: Զնայած նրան, որ գրիչը բերում է յատակ տուեալներ թուրքերի զօրքի, կոստանդնուպոլիսի համար երեք տարի պատերազմելու, երկու կողմերի զոհերի թուրի, նաեւ նաւով փախածների մասին, ակներեւ է, որ Դաւիթ Խարբերդցու շարադրանքը հիմնուած է ժամանակակիցների վկայութիւնների ու տարածուած զորյցների վրայ: Պատմական անճշտութիւններն ի յայտ են դալիս մասնաւրապէս երկու կէտում.

1. **Ստամբուլի պատրիարքը եւ թագաւորը Հռոմ են գնում «վասն հաւատոյ հաստատութեան» եւ մնում են այնտեղ մէկ տարի:**

2. **Թագաւորը եւ պատրիարքը թուրքերի՝ քաղաք մտնելուց յետոյ նաւով փախչում են Հռոմ՝ իրենց հետ տանելով «զամնեայն սրբութիւնս»:**

Ցայտնի է, որ Ֆլորենցիայի (1438-1439) ժողովին մասնակցել են Կոստանդինի նախորդ Յովհաննէս Հ. կայսրը եւ Յովսէփ Բ. պատրիարքը⁵⁴, որ մահացել է այնտեղ: Ինչ վերաբերում է Կոստանդինին, ապա նա հերոսաբար կոռուել եւ զոհուել է մարտում: Այդ են վկայում յունական աղքահրմերը՝ Միքայէլ Դուկասը⁵⁵, դէռդիսու Սֆրանձին⁵⁶, Լաոնիկ Խալկոնդիլը⁵⁷:

52 Անդ, 443:

53 Անդ, 30-31:

54 Այս շփորութեանը անդրադարձել է նաև Յ. Անասեանը. տե՛ս Հայկական աղքահրմերը Բիզանտիայի ամկմամ մասիմ, 62. աշխ., 18:

55 Վիզանտիйский временик, том VII, 401:

56 Անդ, 429:

զի կատարեցաւ մարգարելութիւն հոգելից առն Աստուծոյ սրբոյն ներսէսի, որ վասն քրիստոնէից, թէ յամենայն կողմանց նեղին եւ փոփոխին տեղուցէ ի տեղիս, եւ հանգիստ ոչ գտանեն, եւ վասն մարդադէմ եւ չարագոյն գազանացն ազգին նետողաց»⁴⁶:

Այսպէս, Կոստանդնուպոլիսի անկմանը անդրադարձած գրեթէ բոլոր յիշատակագիրները առաջ են քաշում երկնաւաք դատաստանի, քրիստոնէական մեղքի եւ նրան յաջորդած պատժի գաղափարը: 1457ին Ցոհաննէսը գրում է. «Եւ դարձեալ, ի մեր մեղացն, Մուրատ թէկ անաւրիէն էատ զըստընբաւլ զկոնստանդնուպալիս, եւ Խ. (40) թեռն խաչ եւ աւետարան, նշանարք եւ պատկեր հայրապետաց առին»⁴⁷:

Յիշատակարաննէրի սեղմ տողերում ստուերագծւում են սուլթանի հրամաններից բխած պատուհանները, ինչպէս, օրինակ, քրիստոնէայ մանուկներ հաւաքելը (մանկաժողովները) եւ Ստամբուլ բերելը⁴⁸: Նոյնքան ցաւ է նրանց պատճառում տքնութեամբ ստեղծուած ձեռագրերի, աւետարանների գերեվարումը⁴⁹:

«Վասն մեղաց» է բացատրում պատմական իրադարձութեան նման ելքը գրիչ Ստեփանոսը՝ ողբերգական անցքերի նկարագրութեան մէջ արտացոլելով նաեւ իր Հոգեվիճակը. «...ի սուր սուսերի մաշեցան բնակիչքն նորա (իմա՝ Կոստանդնուպոլիսի), եւ գերի վարեցաւ անթիւ, եւ անհամար նշխար սրբոյն առ ոսս անաւրինաց կոխան եղեւ, եւ եկեղեցին՝ անաւրինաց եղեն բնակութիւն, եւ այլ բազում արհաւիրք եղեն, որ ո՞վ կարէ ընդ գրով արկանել» (1464):⁵⁰

Ոչ միայն Կոստանդնուպոլիսի, այլև Տրապիզոնի գրաւման եւ յետագայ աղէտների պատճառը նա նոյն կերպ է բացատրում՝ «վասն մեղաց եղեն այս ամենայն»:

Յիշատակագիրն ունի յստակ նպատակագրում. «Այլ այս գրեցաւ ձեզ ի խրատ եւ ի յաւգուտ, զի վասն մեղաց եղեն այս ամենայն, զոր տէր Աստուած փրկեսցէ զձեզ ի յամենայն փորձութեանց, ամէն»⁵¹:

Կոստանդնուպոլիսի անկումից գրեթէ քսան տարի անց՝ 1480ին, գրիչ Ներսէսը, որին բռնութեամբ Ամասիայից բերել էին Կոստանդնուպոլիս, բազում հառաջանքով եւ լալով գրում է սուլ-

46 Անդ:

47 Անդ, 81:

48 Անդ, 216:

49 Անդ, 389, 441:

50 Անդ, 211:

51 Անդ:

Բայց միեւնոյն ժամանակ կարող ենք ասել, որ Խարբերդցու գրածները խարսխուած են պատմական որոշակի հիմքերի վրայ: Նոյն աղբիւրներում նշում է, որ այդ օրերին սկսում են տարբեր վարկածներ տարածուել Կոստանդինի վերաբերեալ, որոնցից մէկն էլ այն էր, որ նա փախել է քաղաքից⁵⁸:

Ինչ վերաբերում է Ֆլորենցիայի ժողովի մասնակիցներին, շը փոթութեան համար կարող էր հիմք հանդիսանալ այն, որ Կոստանդինը 1452ին դիմել էր Արեւմուտքին՝ օգնութիւն ակնկալելու յոյսով:

Յիշատակարանը լուսաբանում է առանցքային խնդիրը՝ Կոստանդնուպոլիսի անկման պատճառը: Մի կողմից ժողովրդին հակառակ են գնում կայսրն ու պատրիարքը («ի ֆուանդութիւն դարձան»), միւս կողմից՝ Կիւռլիկէ անունով յոյնը, ով «յշեաց առ քագաւորն Խոնդքարն ծածկարար, թէ ևս տամ զբաղախ Ստամբուլ, մի գնար այտի»: Ապա յիշատակագիրն աւելացնում է, որ իշխանը «բացեալ զմի դրուն բաղադին... եւ մտեալ ազգն տանկաց հանդերձ քագաւորաւն ի ներքս ի բաղաքն»: Դաւաճան իշխանի՝ Լուկա Նոտարասի՝ դէպի թուրքերն ունեցած կողմնորոշման, սուլթանին գաղտնի տուեալներ յայտնելու, նրան մեծ հարստութիւն առաջարկելու մասին վկայում են մեզ հասած աղբիւրները⁵⁹: Խարբերդցին այս ամէնի մասին լուսմ է, սակայն յստակօրէն նրան է վերագրում գաղտնի դուռը բացելու արարքը, մի բան, որ չկայ նաեւ անգլիացի բիւզանդագէտ Ստիւէն Ռանսիմէնի՝ Կոստանդնուպոլիսի անկման մասին սկզբանական աղբիւրների հիման վրայ շարադրուած գրքում: Մեզ հետաքրքրող դրուագի մասին Ռանսիմէնը գրում է, որ ծերունիներն էին կայսրին յիշեցրել գաղտնի դրան մասին: Պատերազմական օրերին այն բացւում էր կայսեր հրամանով անհրաժեշտ գործողութիւնների համար, բայց այդ օրը ինչ-որ մէկը իր ետեւից մոռացել էր փակել այն⁶⁰:

Գաղտնի դրան մասին գրում է նաեւ Հ. Գ. Այվազովսկին, սակայն, առանց որեւէ անուն տալու: Նա յաւելում է միայն, որ դուռը կայսեր հրամանով բաց էր թողնուել՝ համաձայն այն

57 Անդ, 441:

58 Անդ, 429; տես նաև СПЕРАНСКИЙ, М. Н., Повести и сказания о взятии Царыграда турками (1453) в русской письменности XVI – XVII веков, «Труды Комиссии по древнерусской литературе», т. 10, СССР 1954, 163.

59 Византийский временник, том VII, 402, 406, 430, 443: Труды Комиссии по древнерусской литературе , т. 10, 163-164:

60 РАНСИМИН, С., Падение Костандинополя в 1453 г., глава X, Mosca 1983.

մարդարէութեան, որ ինչ գոնով ներս էր մտնելու թշնամին, նոյն դռնով էլ ետ էր վանուելու⁶¹:

Մուում է ենթաղրել, որ Խարբերդցին կամ լսել է այդ մասին ժամանակակիցներից, կամ Լուկա Նոտարասի գործողութիւններից ենելով՝ նրան վերագրել այդ արարքը՝ ամբողջացնելու համար դաւաճան չարագործի կերպարը: Մեր ենթաղրութեան համար հիմք է հանդիսանում այն, որ Խարբերդցին Լուկային համեմատում է Վասակ Սիւնու հետ եւ արտայայտում է իր վերաբերմունքը թէ՛ ուրացած Վասակի, թէ՛ Աստծու կողմից անիծուած պիղծ իշխանի հանդէպ. «Զի որպէս յաւուրս սրբոց Վարդանանց չար իշխանն Սիւնեաց՝ ուրացեալն Վասակ եղեւ պատճառ եւ կորուստ աւերման աշխարհին՝ Հայոց եւ ի կողմն ուրացելոյն դարձաւ՝ նոյնպէս եւ պիղծն Կիւլիկէ... հոռոմն, խոռն ի հաւատոց եւ անիծեալն յԱստուծոյ...»⁶²:

Այսպէս, Դաւիթ Խարբերդցու յիշատակարանը ուրուագծում է պատմական իրադարձութիւնների յատակ պատկերը՝ շարադրանքում ունենալով սեւեռուն մի ձգտում՝ կոստանդնուպոլիսի անկումը ներկայացնել իբրեւ դաւաճանական արարքների ծանր հետեւանք՝ որպէս խրատ եւ դաս յետագայ սերունդների համար:

Կոստանդնուպոլիսի անկումն իր անմիջական արձագանքն է գտնում ԺԵ. դարի հայ գրականութեան մէջ: Քրիստոնեաններին հասած դժբախտութիւնների մէջ առանցքային է դառնում ազգի պատմական ճակատագրի խնդիրը: Տրուում է կատարուածի թէ՛ զգայական նկարագիրը, թէ՛ լուսաբանուում են երևոյթները, պատճառա-հետևանքային կապերը, վեր են հանւում հասարակական տրամադրութիւններն ու ակնկալութիւնները՝ ազգին նորանոր փորձութիւններից ետ պահելու ազնիւ մտահոգութեամբ:

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆԵԱՆ

61 ԱՅՎԱԶՅՈՎԱԿԻ, Հ. Գ., Պատմութիւն Օսմանեան պետութեան, Խո. Ա., Վենետիկ 1841, 145:

62 ԺԵ դարի հայերեւէն ձեռագրերի յիշատակարամներ, մասն երկրորդ (1451-1480), Անդ 30-31:

Summary

THE FALL OF CONSTANTINOPLE AND ITS IMMEDIATE RESPONSE IN THE 15TH CENTURY ARMENIAN LITERATURE

HERIKNAZ VOSKANYAN

The article analyzes the immediate response to the fall of Constantinople in two tragical poems written in 1453 and in the records of manuscripts in the second half of the 15th century.

The research reveals the motivations behind the writing of the tragedy, the mood of their authors and the circumstances and the impacts of the tragedy formation.

It is shown how, based on historical events, Araqel Baghisheci and Abraham Ankjuraci wove nationwide mourning and the dream of national independence into their writing. As a result of different political views, however, the phenomenon was subjected to various aesthetic perceptions.

The similarities and differences of both works are represented, as well as the poetical significance of the creations, and their historical origin is evaluated.

In the records of historical-cognitive value the writers, along with the different information about the life of the Armenian nation, recorded the fall of Constantinople and described and assessed the reign of Sultan Mehmed, highlighting heavenly judgment, Christian sin and the notion of punishment. Among them is David Kharberdtsi's records written in 1453 where the pivotal question is illustrated – the reason for the fall of Constantinople.

The article shows that in Kharberdtsi's statements there is a longing to represent the fall of Constantinople as a serious result of a treacherous act and as a lesson for future generations.

In the 15th century, Armenian literature works about the fall of Constantinople the main concern is the problem of historical fate of the nation.